





Հաստատված է՝

Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» Համալսարանի  
գիտական խորհրդի 2016թ թիվ նիստում

Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի ռեկտոր,  
գիտական խորհրդի նախագահ  Վ.Ս.Հակոբյան



ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՌԵԿՏՈՐԱՏԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» Համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) ռեկտորատի (այսուհետ՝ ռեկտորատ) կարգավիճակը, իրավասությունը, ռեկտորատի նիստերի նախապատրաստման և անցկացման ընթացակարգը:
2. Սույն կանոնակարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են գիտական խորհրդի կողմից:

II. ՌԵԿՏՈՐԱՏԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

3. Ռեկտորատը ռեկտորին կից խորհրդակցական մարմին է, որը ձևավորվում է ռեկտորի հրամանով:
4. Ռեկտորատը, Համալսարանի ռեկտորին կանոնադրությամբ վերապահված իրավասության շրջանակներում, քննարկում է Համալսարանի գործունեությանը վերաբերող հարցեր:
5. Ռեկտորատի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության, ռեկտորի կողմից սահմանված ժամկետներում և օրակարգով:

### III. ՌԵԿՏՈՐԱՏԻ ԿԱԶՄԸ

6. Ռեկտորատի կազմի մեջ մտնում են ռեկտորը, պրոռեկտորները, գիտական քարտուղարը, ռեկտորի օգնականը, ստորաբաժանումների պետերը, ֆակուլտետների ղեկանները, ամբիոնների վարիչները, գլխավոր հաշվապահը, գրադարանի պատասխանատուն, ուսանողական խորհրդի նախագահը, ուսանողական գիտական ընկերության նախագահը:

7. Ռեկտորի հրավերով ռեկտորատի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով՝ մշտական կամ ժամանակավոր հիմունքներով կարող են մասնակցել համապատասխան կարգավիճակ և որակավորում ունեցող մասնագետներ:

### IV. ՌԵԿՏՈՐԱՏԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ

8. Ռեկտորատի նիստերը նախագահում է ռեկտորը:

9. Ռեկտորը, բացելով ռեկտորատի նիստը, հայտարարում է նիստի օրակարգը, սահմանում օրակարգի հարցերի քննարկման ընթացակարգը և հաջորդականությունը:

10. Ռեկտորատում որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ:

### V. ՌԵԿՏՈՐԱՏԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

11. Ռեկտորատի որոշումներն ունեն խորհրդատվական բնույթ և կարող են դրվել ռեկտորի կողմից կայացվող որոշումների հիմքում:

### VI. ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

12. Ռեկտորատի նիստերն արձանագրվում են: Արձանագրության վարումը կազմակերպում է գիտական քարտուղարը:

13. Ռեկտորատի նիստերի արձանագրության մեջ նշվում են նիստի անցկացման ամսաթիվը, նիստին ներկա անձանց անվանացանկը, նիստի օրակարգը, օրակարգի հարցերի վերաբերյալ ընդունված որոշումները:

14. Ռեկտորատի նիստերի արձանագրությունները ստորագրում են ռեկտորը և գիտական քարտուղարը: